



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ  
ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

**Ս. ՍԱՐԳԻՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ, ՏԿԱՐԸ ԵՒ ՏԿԱՐԱՑՆՈՐԸ, ԹՈՅԼԸ ԵՒ  
ԹՈՒԼԱՑՆՈՐԸ ՉԳԵՏՆԵՆՔ, ԵՒ ՀԱՄԱՑՔԻ ՎԱՅԱՆՈՎ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԻՆՔ՝ ԱՌԱՆՑ ՏԿԱՐԱՆԱԼՈՒ ԵՒ ԱՌԱՆՑ ԹՈՒՆԱԼՈՒ**

*ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ*

Հայկական Տոնացոյցին համաձայն, Շաբաթ, 7 Փետրուարը տօնն էր Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ ու հաւատարիմ ծառայ եւ քաջ նահատակ Ս. Սարգիս Չօրավարին, իր որդւոյն Մարտիրոսի եւ իր 14 զինակիցներուն, որոնք նահատակութեամբ վկայեցին իրենց հաւատքը:

Կիրակի, 8 Փետրուարի առաւօտուն, Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ անուանակոչութեան առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ս. Խորանին կը սպասարկէին Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկիմեան եւ եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Քինյ. Պապոշեան: Եկեղեցին խումներամ բազմութիւն մը լեցուցած էր: Դպիրներուն ներդաշնակ երգեցողութեամբ, Կիրակնօրեայի աշակերտները եւ հաւատացեալները իրենք ալ կը մասնակցէին Ս. Պատարագի երգեցողութեան:

Քարոզին սկիզբը, Առաջնորդ Սրբազան Հայրը նախ փառք եւ գոհութիւն վերառաքեց Աստուծոյ, որ անգամ մը եւս առիթը շնորհած էր բոլորիս համախմբուելու եւ տօնախմբելու Ս. Սարգիս եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը: Եւ այս պահը, շեշտեց Սրբազանը, յանձնառութեան եւ կորոզեալ հաւատքի պահն է, եւ անոր համար է որ իբրեւ ուխտաւորներ եկած ենք՝ մասնակից դառնալու Ս. Պատարագին եւ մատաղօրհներին: Առ այդ՝ Սրբազանը ողջունեց եկեղեցւոյ բարերարները՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիւզան Կիտցինեանները, Նուիրատուները, եկեղեցւոյ երեսփոխանները, Հոգաբարձութիւնը, Տիկնանց միութիւնը, Դպրաց դասը եւ Կիրակնօրեայի աշակերտները:

Սրբազանը յիշեցուց բոլորին, որ Վեհափառ Հայրապետը այս տարին հռչակած է Երիտասարդաց Տարի, առ այդ՝ այսօր մեր Թեմի բոլոր եկեղեցիներէն ներս, յընթացս Ս. Պատարագին, պիտի ընթացրուի Վեհափառ Հօր պատգամը: Եւ որովհետեւ Ս. Սարգիսը առաւելաբար նկատուած է

երիտասարդներու փափաքները իրականացնող սուրբ, ուստի, ըսաւ Սրբազանը, այս Ս. Պատարագը մենք կը ձօնենք Հայ երիտասարդներուն: Երէկ ալ, Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ մատուցուած Ս. Պատարագի աւարտին, նշեց Սրբազան Հայրը, համախմբեցինք երիտասարդները եւ օրհնեցինք զիրենք, որպէսզի անոնք զերծ մնան չարին յարձակումներէն, չար պատահարներէ եւ չար փորձանքներէ:

Խօսելով Ս. Սարգիս Չօրավարի մասին, Սրբազանը մէջբերեց շարականագրին բառերը, որով Ս. Սարգիս, Քրիստոսի Չինուորը, Հօրմէն պարգեւ ստացաւ եւ աստուածատունկ դրախտէն մեզի շառաւիղ ծագեցաւ. ինք է յոյսի զէնքը եւ հաւատքի վահանը: Ս. Սարգիս այս աշխարհի վրայ ապրեցաւ հաւատքով ու պայքարեցաւ չարին դէմ եւ հաւատքի վահանով դէմ դրաւ չարի ամէն յարձակումներուն, եւ քանի որ Անմահին՝ Քրիստոսի սուրբ սիրով վառուած էր՝ ուստի աշխարհը իրեն համար մեռած էր: Ս. Սարգիսի ապրած կեանքը ինքնին պատգամ է մեզի՝ իր օրինակով ապրելու եւ մեր հոգիները մաքրելու եւ զօրացնելու հաւատքով, յոյսով ու սիրով: Դիմենք Սուրբին բարեխօսութեան, որովհետեւ կը լսէ մեզի ու շուտով կը պատասխանէ: Ան որ ցաւի ու արցունքի մէջ եղած է, Ս. Սարգիս եղած է արտասուքի ու արցունքի սրբիչ, ան որ եղած է սուգի մէջ՝ Ս. Սարգիս եղած է մխիթարող Սուրբ, ան որ մթութեան մէջ խարխափած ու տուայտած է, Ս. Սարգիս եղած է՝ լուսաւոր փարոս մութ հոգիներու, ցաւերու բուժիչ ու հիւանդներու բժիշկ: Բանա՛նք մեր սիրտերը Աստուծոյ եւ Սուրբին բարեխօսութեամբ իրեն դիմենք: Մեր վրայ առնենք հաւատքի վահանը ու յոյսի սուրը եւ պայքարինք չարին ու խաւարին դէմ: Տկարը եւ տկարացնողը, թոյլը եւ թուլացնողը զգետնենք եւ հաւատքի վահանով պաշտպանուինք՝ առանց տկարանալու, առանց մեր հաւատքին մէջ թուլնալու, առանց մեր պայքարին մէջ ընկրկելու կամ նահանջելու, եզրակացուց Առաջնորդ Սրբազանը:

Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, վասն հոգւոցն եկեղեցւոյ նախկին հոգեւոր հովիւին, ծառայողներուն, բարերարներուն եւ նուիրատուներուն, ինչպէս նաեւ՝ մատաղի օրհնութիւն, խնդրելով Աստուծմէ, որ այս մատաղին ընդմէջէն Ս. Հոգին ի՛նք սրբէ հաւատացեալներուն մեղքերը, բժշկութիւն պարգեւէ բոլոր հաւատացեալներու ցաւերուն, եւ լուսաւորէ հանգուցեալ մեր հարազատներուն հոգիները:

Մատաղօրհնէքի աւարտին, «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ թափօրը յառաջացաւ եկեղեցւոյ գաւիթը, ուր հաւատացեալները մեծ խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա»ն եւ «Ի վեհ բարձանց» հայրապետական մաղթերգները: Եկեղեցիէն մեկնած ժամանակ՝ հաւատացեալներ ստացան մասն ու մատաղը եւ հոգելից ապրումներով վերադարձան իրենց տունները:

## **ՍԻՐՈՅ ԾԱՇ**

Նոյն օրը, կէսօրին, Մարաշի Հարենակցական միութեան սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր,

մասնակցութեամբ Յոզեփականաց դասուն, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներուն, Յոգաբարձական եւ Տիկնաց կազմերուն, եկեղեցւոյ գլխաւոր բարերարներուն, անոնց հարազատներուն, հովանաւորներուն եւ եկեղեցւոյ յարակից մարմիններուն ու բարեկամներուն:

Ճաշի ընթացքին շնորհակալական խօսքերով հանդես եկան եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, հոգաբարձութեան ատենապետը եւ Տիկնաց միութեան ատենապետուհին: Առաջնորդ Սրբազան Յայրը անգամ մը եւս գնահատեց Ս. Սարգիս եկեղեցւոյ մեծ ընտանիքը, եւ օրհնեց բոլորին տարած անսակարկ նուիրումն ու ծառայութիւնը:

## **PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE FEAST OF ST. SARKIS AND THE NAME DAY OF ST. SARKIS CHURCH**

In accordance with the Armenian Church calendar, Saturday, February 7<sup>th</sup>, was the feast day commemorating St. Sarkis, his son Mardiros, and their fourteen soldiers who were martyred for their faith.

On this occasion, which is also the name day of St. Sarkis Church in Pasadena, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, delivered the sermon, and presided over the blessing of *madagh* at St. Sarkis Church. Assisting at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Khoren Babochian.

Prior to his sermon the Prelate first gave thanks to the Lord for once again granting the opportunity for the faithful to gather to collectively celebrate the name day of the church. He greeted the faithful, including parish benefactors Mr. and Mrs. Sarkis and Suzan Kitsinian, donors, Delegates, Board of Trustees, Ladies Auxiliary, Deacons, Choir members, and Sunday School students, reminding them that H.H. Catholicos Aram I has proclaimed 2009 to be the Year of the Youth and since St. Sarkis is regarded as the patron saint of youth, the Divine Liturgy being celebrated was dedicated to Armenian youth. He also mentioned that the previous evening, following Divine Liturgy at the Prelacy “St. Dertad and St. Ashken” Chapel, the youth gathered at the Chapel where they were blessed and prayers were offered to protect them from harm and wrongdoing.

The Prelate exalted the exemplary life of St. Sarkis who lived his life with hope and faith and fought against evil armed with his deep faith, thus his life is a message to us all to live in his example, to purify our souls, and to be reinforced with our faith, hope, and love. Let us seek the intercession of St. Sarkis and fortify ourselves with the shield of faith so that we may not falter in our path, concluded the Prelate.

The blessing of *madagh* and requiem for the souls of departed servants followed, after which the Prelate was led in a procession to the entrance of the church accompanied by the singing of the Pontifical and Cilician anthems.

In the afternoon the Prelate presided over the name day reception at the hall of the Marash Compatriotic Union. During the reception remarks were delivered by the Pastor, Board of Trustees Chairman, and the Ladies Auxiliary

Chairlady. The reception concluded with the Prelate's remarks and blessings during which he once again commended the church servants for their efforts and dedication to the parish.